ԴԵՐԵՆԻԿ ԵՊԻՍԿՈՊՈՍ

ՄԿՐՏՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԴՐՈՇՄ (ԿՆՈՒՆՔ)



1988

Այս գրքույկը կազմվել է Դերենիկ եպիսկոպոսի «Հայ առաքելական Եկեղեցու Խորհուրդները» գրքից: Հայ եկեղեցին ունի յոթ խորհուրդ՝ մկրտություն, դրոշմ, հաղորդություն, ապաշխարություն, ձեռնադրություն, պսակ-ամուսնություն և վերջին օծում:

Այն, որ մենք ԿՆՈՒՆՔ ենք անվանում փաստորեն իր մեջ ընդգրկում է երկու խորհուրդ՝ մկրտություն և դրոշմ, իսկ վերջում էլ կատարվում է երրորդ խորհուրդը՝ հաղորդությունը: Հեղինակն իր առջև նպատակ է դրել համառոտ պատմել, թե ինչպես է քահանան կատարում այդ խորհուրդները, ինչ մասերից են բաղկացած և համառոտ նկարագրում է թե՛ այդ գործողությունները և թե՛ դրանց հոգևոր նշանակությունը: Այդ ամենը պարզ ընդգրկելու և պատկերացնելու համար ընթերցումներն Աստվածաշնչից բերվում են աշխարհաբար, իսկ մկրտության ժամանակ ասվող հիմնական աղոթքներն ու բանաձևերը թե՛ գրաբար և թե՛ աշխարհաբար: Բոլոր դարաշրջաններում Աստծո կամքն է, որ ***«ամենը միացնի Գլխին՝ Քրիստոսին, որում և մենք ժառանգ եղանք»*** *(Եփեսացիներին 1. 9-11):*

Թե Պողոս Առաքյալի և թե եկեղեցու անդամների սրտի բաղձանքն է եղել, որ մարդկանց հոգու աչքերը բացվեն, որ կարողանան իրենց

Փրկչին՝ իր աստվածային արյամբ իրենց գնող Տիրոջը ճանաչեն և առավել ճանաչելու ետևից լինեն: Այժմ ստեղծվել է մի այնպիսի իրավիճակ, երբ մեզանից շատերը մկրտվում են որպես քրիստոնյա, բայց չեն ճանաչում «իրենց փրկագնող Տիրոջը» և չգիտեն թե ո՞վ է Քրիստոսը և թե ի՞նչ է մկրտությունը: Այս բացը լրացնելու համար է այս գրքույկը: Այն կարող է օգտակար լինել երեխաներին, այսինքն մկրտությանը նախապատրաստվող մարդկանց, նաև կնքահայրերին՝ ճանաչելու և քրիստոնեական իրենց պարտականությունը սիրով ի գործ դնելու համար: Հայ Առաքելական Եկեղեցուն շատ խորթ է այն փաստը, որ կնքահայրը կարող է լավ գիտակ չլինել Հավատքին և Դավանանքին և, Մկրտվողը կարող է չիմանալ թե ո՞վ է Քրիստոսը, ինչո՞ւ աշխարհ եկավ, և ի՞նչ կատարեց և որ գալու է նորից այս անգամ դատելու ողջերին և մեռածներին: Եկեղեցու տեսանկյունով մկրտությամբ մարդը անդամագրվում է Եկեղեցուն, դառնում է նրա լիիրավ անդամը՝ մարմինը և անդամը լինելով Քրիստոսի:

Ըստ մեր Եկեղեցու, մարդը, եթե հավատով ապաշխարում, զղջում է իր գործած մեղքերի համար և մտնում է Եկեղեցի, մկրտվելով Սուրբ Երրորդության անունով, ստանում է մեղքերի թողություն և կնքվում է Սուրբ Հոգով, որը մարդու փրկագնված լինելու գրավականն է: Իսկ դրոշմի միջոցով ընդունում է Սուրբ Հոգու շնորհը, այսինքն էլ ավելի կյանք և Աստծուն ծառայելու համար անհրաժեշտ եղող Շնորհը: Այսինքն, լոկ հավատով, առանց գործերի, անդամակցվում է Քրիստոսի Եկեղեցուն՝ լիիրավ անդամ դառնում այն ընտանիքին, որի անունն է Հայաստանյաց Առաքելական Եկեղեցի: Այսինքն, աստվածաշնչական ձևակերպումը՝ ***«մենք հավատով արդարարցած խաղաղություն ունենք Աստծո հետ մեր Տեր Հիսուս Քրիստոսի միջոցով»*** *(Հռոմ. 5.1), կյանքի է կոչում: Եվ այս ամենը հավասարակշռվում է Եկեղեցու ընդհանրական ընկալմամբ. այս երկրային կյանքը մենք կարող ենք կորցնել կամ մարել մեր վարքով, մեր գործերով: Եվ եկեղեցին տալիս է իր դեղատոմսը՝ հավատով հարատևել բարիք գործելով:*

Եկեղեցու Հայրերը միշտ էլ պատշաճ տեղ են հատկացրել այս նյութերին, անվանելով այն «առաջին սովորելիքներ»: Հավատում ենք և աղոթում, որ աղոթքով երկնքից իջեցրած այս խորհուրդներին ծանոթանալը կօգնի մարդկանց պատշաճ հավատով և որոշ գիտելիքներով մոտենալ այդ խորհրդին, որը պետք է կատարել «երկյուղով և հավատով»:

ՄԿՐՏՈՒԹՅՈՒՆ

ԽՈՐՀՐԴԻ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Մկրտությունը ադամական՝ սկզբնական մեղքից սրբվելու և հոգևոր վերածննդի խորհուրդն է: Մկրտվելով երեխան ընդունում է Սուրբ Հոգին՝ դառնում մարմին և անդամ Եկեղեցու՝ հագնելով Քրիստոսը: Հայաստանեաց Եկեղեցու մկրտության կարգի համաձայն մկրտվողը ընդունում է Երկնավոր Հոր որդեգրությունը դառնում ժառանգակիցը Քրիստոսի և Տաճար Հոգվույն Սրբո: Այսպիսով մկրտությամբ երեխան դառնում է նոր մարդ, սրբված՝ վերածնված: Մկրտությունը խորհուրդներից առաջինն է: Քանի դեռ մարդը մկրտված չէ, նրա վրա չի կարելի որևէ ուրիշ խորհուրդ կատարել: Հովհաննես Երզնկացին այդ առիթով այսպես է ասում.

> Մկրտությունը Քրիստոնեության սկիզբն է և գլուխը, ժողովուրդը այն կնունք է անվանում: Ի՞նչ է Մկրտությունը. - Վերստին և հոգևոր ծնունդ է, ինչպես որ Քրիստոսն ասաց. Եթե մեկը վերստին չծնվի՝ Հոգուց և ջրից, չի կարող մտնել Երկնքի Թագավորությունը. (Հովհաննես 3. 3-5): Եվ ասվում է Վերստին ծնունդ, քանի որ առաջին անգամ ծնվում են ըստ մարմնի՝ մարմնավոր ծնողներից, որը մեղանչական ծնունդ է, երկրորդ անգամ ծնվում են հոգևոր և աստվածային ծնունդով՝ հոգևոր ծնողներից: Այս ծննդյան հայրը Աստվածն է, մայրը՝ Եկեղեցին, արգանդը՝ Ավազանը, որը ծնում է մանկանը ջրով և Հոգով: Որովհետև ինչպես ջուրը լվանում և մաքրում է կեղտը, այնպես էլ Սուրբ Հոգին սրբում և մաքրում է մարդու հոգին և դարձնում մարդուն տաճար Աստծո: (Խրատներ, էջ 149)

Հայոց Եկեղեցում մկրտությունը կատարվում է ջրի մեջ երեք անգամ ընկղմելով հանուն Սուրբ Երրորդության, քրիստոնեական եկեղեցու նախկին սովորության համաձայն: Երեք անգամ ընկղմվելը համապատասխանում է Քրիստոսի քավչարար գործին. ջրի մեջ մտնելը մահվան նշանակ է, ընկղմվելը՝ թաղման, ջրից դուրս գալը՝ հարության:

Այսպիսով հին մարդը մեռնում է, նորը՝ հարություն առնում: Մկրտվածը դառնում է Եկեղեցու՝ այսինքն փրկված մարդկության մեկ անդամը:

Ըստ Պողոս Առաքյալի Քրիստոսի մահը, թաղումը և հարությունը իրողություններ են ոչ միայն պատմական տեսանկյունով, այլև իրողություններ են, որոնք ներգործում և ներազդում են նաև հիմա՝ ըստ աշխարհի հավերժական կարգի: Հավատացյալը մկրտությամբ միանալով Քրիստոսին մասնակից է լինում նրա կյանքի այս իրողություններին. մեռնում նրա մահով, թաղվում է նրա հետ և հարություն առնում նրա հարությամբ: Ջրի մեջ մտնելով յուրաքանչյուր անհատ մեռնում է Քրիստոսի հետ: Ջրի մեջ ընկղմելով թաղվում է Քրիստոսի հետ՝ փաստելով, որ իր մահը մեղքի հանդեպ իրական է, ինչպես Քրիստոսի մահը: Ջրից դուրս գալով սրբվում է և վերածնված ու հարուցյալ նոր կյանք մտնում:

ԽՈՐՀՐԴԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

Մկրտության խորհուրդը կատարողը պետք է քահանայական կարգ ունեցող եկեղեցական լինի: Հայ Եկեղեցու տեսանկյունով շատ հստակ է այն իրողությունը, որ Եկեղեցին կատարում է խորհուրդը՝ քահանայի ձեռքով: Եկեղեցին Քրիստոսի մարմինն է և խորհուրդը կատարողը անձամբ Քրիստոսն է: Եկեղեցու կենդանի գործավորությունից դուրս ոչ խորոհուրդ կա, ոչ էլ խորհրդակատար:

Հայոց Եկեղեցին նույնիսկ սարկավագներին է խստիվ արգելել մկրտություն կատարել, անկախ ամեն տեսակ իրավիճակներից: Սուրբ Սահակ Հայրապետի կանոններում պարզորոշ ասված է.

> Սարկավագները երբեք չմկրտեն, եթե փորձեն մկրտել՝ լուծման ենթարկվեն և պատժվեն, քանի որ սարկավագը քահանա չէ, այլ քահանայի սպասավոր
>
> (Կանոն 17):

Նույն բանն է հրահանգում Դվինի Բ ժողովի 17 կանոնը: Ուշադրավ է նաև Պարտավի ժողովի 20 կանոնը, ըստ որի նույնիսկ մանկան մահամերձ լինելու պարագայում քահանայից բացի ոչ ոք իրավունք չունի խորհուրդ կատարելու, քանի որ ոչ միայն մկրտվելու ջերմ փափագ ունեցող չափահասներն են փրկվում փափագը չիրագործած մեռնելու դեպքում, այլև նաև մանուկները՝ իրենց ծնողների մկրտելու փափագի և դիտավորության շնորհիվ, անգամ եթե մահանում են մկրտվելուց առաջ: Եկեղեցական թաղման կարգը կատարելու համար ծնողները պետք է հայտնեն քահանային իրենց դիտավո-

րության մասին:

Եթե մկրտվողը չափահաս է, անհրաժեշտ է, որ ապաշխարած լինի և հավատ ունենա:

> - Ի՞նչ անենք, եղբայրներ:
> Պետրոսը նրանց ասաց.
> - Ապաշխարեցեք, և ձեզնից յուրաքանչյուրը թող մկրտվի Տեր Հիսուս Քրիստոսի անունով՝ մեղքերի թողության համար, և պիտի ընդունեք Սուրբ Հոգու պարգևը: Գործք Առաքելոց 2.38
> Արդ, ապաշխարեցեք և դարձի եկեք, որ ձեր մեղքերը ջնջվեն:
> Գործք Առաքելոց 3.19
> Ով որ հավատա և մկրտվի կփրկվի, և ով չհավատա, պիտի դատապարտվի:
> Ավետարան ըստ Մարկոսի 16.16

Ապաշխարած և անհավատ մարդիկ չպետք է մկրտվեն:

Հասակավոր երեխաների (եկեղեցին երեխա է անվանում ցանկացած տարիքի մկրտության պատրաստվող մարդկանց) թե ադամական, այսինքն ծնունդով ժառանգած, և թե ներգործական, այսինքն կյանքի ընթացքում գործած մեղքերը մկրտությամբ ջնջվում են: Նրանք պետք է տեղյակ լինեն մկրտության նախապատրաստման համար կանոնացված պայմաններին, որի մասին Մաշտոցը՝ խորհուրդների կատարման ծիսարանը, հատուկ խրատ ունի.

> Երբ ցանկանում են քրիստոնյա դարձնել հասակն առած երեխային, չի թույլատրվում եկեղեցի մտնել, այլ մկրտությունից ամենաքիչը երեք շաբաթ ձեռնադրում են* և սովորեցնում հավատը և եկեղեցու վարդապետությունը, որն է.
>
> Սուրբ Երրորդության Աստվածությունը, Նրա Արարչությունը և մնացած ամեն ինչի ստեղծված լինելը, և ապա Քրիստոսի ծնունդը: Նաև հերթականությամբ ամբողջ տնօրինությունը.
> Խաչի մեծ խորհուրդը,
> Թաղումը Քրիստոսի,
> Հարությունը, առ Հայր Համբարձումը
> և Երկրորդ Գալուստը,
> բոլոր մարմինների հարությունը,
> հավատացյալների ընտրությունը
> և նրանց յուրաքանչյուր գործի հատուցումը:

Սա է չափահասների մկրտության կարգը. նախ այսպես, երեխայացնելով, այսինքն մկրտության պատրաստելով, ուսուցանում են,

---

* *Մկրտությունից առաջ ձեռնադրելը գրոշմի խորհուրդի հետ որևէ կապ չունի, ուղղակի քահանայի կողմից օրհնության ձև է: Այժմ: ցավոք սրտի, գործնականում այս պահանջները չեն կատարվում: Այս գիտելիքները մկրտվողին պեք է հաղորդեն կամ ծանոթ քրիստոնյաները կամ էլ կնքահայրը:*

հետո առաջնորդում մկրտության:

Պատերազմի ժամանակ այն բոլոր երեխաները, այսինքն մկրտությանը նախապատրաստված չափահասներն ու փոքր տարիքի մանուկներ, որոնք հակառակ իրենց փափագին չեն հասցրել մկրտվել, սրբվում են իրենց մեղքերից իրենց մարտիրոսական մահով, որպես թե Սուրբ Ավազանում մկրտված լինեն. նրանք մկրտվում են հրով և Սուրբ Հոգով (Տե՛ս կանոն Աթանասի 87):

Մանկան փոխարեն նրա հավատի պատասխանատվությունը ստանձնում է կնքահայրը, քանզի անգիտության պատճառով երեխան խորհուրդը ընդունելու համար անհրաժեշտ հավատ չունի: Անհրաժեշտ է, որ կնքահայրը լինի հավատացյալ մարդ և նույն եկեղեցու անդամ: Կնքահայր չեն կարող լինել այլադավան եկեղեցիների և տարբեր կրոնների պատկանող անձինք, ինչպես նաև կանայք և անչափահասներ:*

Այսպիսով Հայաստանյաց Եկեղեցում կնքահոր պաշտոնն է երեխայի անգիտակցության հետևանքով վկայել նրա հավատի մասին և հոգալ երեխայի հոգևոր դաստիարակությունը՝ առաջնորդելով նրան Եկեղեցու հավատին: Այդ պատճառով էլ կնքահայրը պետք է լինի կատարյալ հավատացյալ զավակ Հայաստանեաց Եկեղեցու, ծանոթ նրա հավատի դավանությանը, որպեսզի կարողանա Ավետարանը ուսուցանել մանկանը և նրան մեծացնել քրիստոնեական ոգիով՝ Հայաստանեայց Եկեղեցու դավանությամբ: Իհարկե, սա չի նշանակում, որ ծնողները պատասխանատու չեն երեխայի դաստիարակության սրբազան գործին:

*Կնքահայրը և ծնողները գործակից պետք է լինեն, նրանցից մեկի մահվան դեպքում երեխայի ամբողջ դաստիարակության պատասխանատվությունը ընկնում է մյուսի վրա**: Հարկ է, որ կնքահայրը գոնե իմանա Հայաստանեաց Եկեղեցում մկրտության ժամանակ արտասանվող հավատամքը.*

---

* Վերջին հարյուրամյակի փորձը ցույց է տվեց, որ որոշ դժվար իրավիճակներում կանանց կնքահայր լինելը հարցի միակ լուծումն է՝ գաղտնի կատարվող մկրտության անհրաժեշտ պայմանը: Ավելի ճիշտ հենց մկրտող քահանան երբեմն ստանձնում է կնքահոր պաշտոնը:

** Հովհաննես Երզնկացին իր Խրատներում այսպես է հաղորդում. քրիստոնյաները պարտավոր են իրենց զավակներին սրբությամբ և անարատությամբ դաստիարակել մկրտության օրից մինչև չափահաս դառնալը: Երբ սկսի զգալ, խաչ հանել պետք է սովորեցնել, երբ սկսի քայլել՝ ծնրադել, երբ ազատ խոսի, հարկ է սովորեցնել հավատո խոստովանությունը, որվ կնքահայրն ասաց մկրտության ժամանակ:)

Հավատում ենք Ամենասուրբ Երրորդությանը՝ Հորը Որդուն և Սուրբ Հոգուն, Գաբրիելի ավետմանը, Քրիստոսի ծննդին, մկրտությանն ու չարչարանքներին, խաչելությանը, աստվածապես համբարձմանն ու Հոր Աջ կողմում նստելուն, ահավոր և փառավորյալ մյուս անգամ գալստյանը խոստովանում ենք և հավատում:

Հաւատամք յամենասուրբ Երրորդութիւնն՝ ի Հայր, և յՈրդի, և ի Սուրբ Հոգի, զաւետումն Գաբրիելի, զծնունդն Քրիստոսի, զմկրտութիւնն, զչարչարանս, զխաչելութիւնն, զաստուածապէս համբաւումն, զնստիլն ընդ աջմէ Հօր, զահաւոր և զփառաւորեալ զմիւսանգամ գալուստն՝ խոստովանիմք և հաւատամք:

Մկրտությունը պետք է կատարվի Եկեղեցու վիմակերտ ավազանում:

> Պետք չէ ավազանը մի այլ նյութից պատրաստել և ուր ուզել դնել, այլ պետք է հաստատել մի քարեղեն ավազան հենց եկեղեցու մեջ (13-րդ կանոն, Ե ժողով Դուինա):

Եթե երեխան հիվանդ է կա մահվան վտանգ, թույլատրվում է խորհուրդը կատարել տանը:

> Տանը... հարկ չէ քահանաներին մկրտելու, միայն այն դեպքում է կարելի, երբ երեխային մահվան երկյուղն է սպառնում (15-րդ կանոն, Բ ժողով Դուինա):

Մկրտությունը կարելի է կատարել տանը կամ մի այլ հարմար վայրում այնտեղ, ուր եկեղեցի չկա կամ եկեղեցին հալածվում է: Առանց մկրտության մահացող երեխայի վրա թաղման կարգ չեն կատարում, որովհետև Սուրբ Հոգին չի ստացել և եկեղեցու մարմին և անդամ չի եղել: Ըստ Հայրապետների հաստատած կանոնի՝

> Քանի որ կյանքում արժանի չեղավ կենդանարար Շնորհին (Երուսաղեմ, Ձեռագիր 2911, էջ 480):

Երեխաների մկրտության ժամանակը ութօրյա է: Մահվան վտանգի դեպքում կարելի է ավելի շուտ կատարել: Եթե հիվանդության կամ այլ պատճառով հնարավոր չէ ջրի մեջ ընկղմել, թույլատրվում է կատարել խորհուրդը հեղմամբ (վրան լցնելով) կամ սրսկումով (ջուրը ցողելով):

Մկրտությունը չի կարելի նորից կատարել, որովհետև այն հոգևոր ծնունդ է.

Մի Տեր, մի հավատ և մի մկրտություն:

(Պողոս Առաքյալի Ուղերձը Եփեսացիներին 4.5)

Մարդը մեկ անգամ է ծնվում, ուստի մեկ անգամ է միայն

մկրտվում: Մկրտությունը կարելի է կրկնել այն ժամանակ միայն, երբ այն Սուրբ Երրորդության անունով չի կատարվել և երբ մկրտվողը չի հավատացել Հիսուս Քրիստոսի աստվածությանը:

Անվավեր մկրտությունից հետո պետք է այն կրկնել, ավելի ճիշտ վավերաբար պետք է մկրտել: Եթե մկրտողը քահանա չէր, անվավեր է մկրտությունը և հարկ է, որ ենթական քահանայի ձեռքով մկրտվի: Աթանաս Հայրապետի 49-րդ կանոնն այսպես է ավանդում.

> Եթե մեկը հանդգնում է օտար երկիր գնալ և իրեն քահանա անվանելով շատերին մկրտել շահի ու նյութականի համար, և հետո բացահայտվում է, որ նա, որից մկրտվեցին, քահանա չէ, ի՞նչ է անելու մկրտվողը:
> Պատասխան՝ նորից է մկրտվելու:

Իսկ եթե մկրտողը քահանա էր, բայց այնպես պատահեց, որ մկրտության համար անհրաժեշտ եղող նյութը կամ բանաձևը չգործածվեց, այս դեպքում մկրտությունը, թեև կատարվել է քահանայի ձեռքով, անվավեր է և պետք է երեխան նորից վավերաբար մկրտվի:

Թե հին, թե նոր բոլոր այն աղանդավորները, որոնք Սուրբ Երրորդության անվամբ չեն մկրտվել կամ էլ իրենց մկրտողները Հիսուս Քրիստոսի աստվածությունը չեն դավանել, պետք է նորից մկրտվեն, երբ ուզեն գալ ճշմարիտ եկեղեցու ծոցը:

ԽՈՐՀՐԴԻ ԿԱՏԱՐՈՒՄԸ

Մկրտության առաջին մասը ապաշխարությունն է: Կնքահայրը և խորհրդակատարման ներկաները հանուն երեխայի զղջում են իրենց գործած մեղքերի համար և Աստծուց թողություն հայցում:

Երկրորդ մասը. երեխայի հրաժարումն է աշխարհից և դարձը հավատի Լույսին՝ Աստվածգիտությանը, և հետո իր հավատի դավանության հայտարարումը:

Երրորդ՝ մուտքն է եկեղեցի մկրտվողը ապաշխարած մաքրազարդված և իր հավատը հայտարարած արժանի է Քրիստոսի եկեղեցու անդամը լինելու:*

Չորրորդ մասը բուն մկրտությունն է. նախ ջուր է լցվում ավազանի մեջ, հետո երեխային նրա մեջ են իջեցնում և ապա ջրից դուրս հանում:

Երեխան սաղմոսների փոխասացությամբ տարվում է եկեղեցի: Որից հետո քահանան ոլորում է կարմիր և սպիտակ թելերով նարոտը՝

* *Ապաշխարությունն ու հրաժարումը տեղի է ունենում Տաճարի գավթում:*

որպես Քրիստոսի տիգախոց կողից ելած կենարար արյան ու ջրի խորհուրդ և երգում է «Երրորդություն անբաժանելի» ու «Պահպանիչ» ասելով նարոտի վրա աղոթում է.

Ըստ որի իր ծննդից ի վեր զավակ է ինքը: Եվ ահա

Ով մարդասեր Տեր, ընդունիր Քեզ ընծայվող այս երեխային, սրբիր միտքն ու խորհուրդները նրա՝ հակառակորդի ամեն ներգործումից: Արժանացրու սուրբ Ավազանով լվանալ մեր մեղքի հնությունը և Քո շնորհի լույսով նորոգվել... լցրու նրան երկնային շնորհովդ և ուրախացրու ամենաբարի կոչումով Քրիստոնյա անվանվելու և արժանացրու սրան Մկրտության վերստին ծննդյան սուրբ Ավազանին, ընդունելով Քո Սուրբ Հոգին՝ Քո Սուրբ Եկեղեցու մարմինը և անդամը լինի:

Ընկալ մարդասէր Տէ՛ր, զընծայեալն Քեզ զերեխայս զայս, և սրբեա՛ զմիտս և զխորհուրդս սորա յամենայն ներգործութենից հակառակորդին: Եւ արժանի՛ արա զսա ի ձեռն սուրբ Աւազանի լուանալ զհնութիւն մեղաց իւրոց, և նորոգիլ լուսով շնորհաց քոց... լցո՛ զսա երկնային շնորհօքդ, և զուարճացո ամենաբարի կոչմամբ Քրիստոնեա անուանելով և արժանի արա զսա Մկրտութեան վերստին ծնանդեան սուրբ Աւազանին: Եւ ընդունելով զՀոգիդ քո Սուրբ, մարմին և անդամ եղիցի եկեղեցւոյ քում սրբոյ:

Կնքահայրը շապիկ հագած երեք անգամ ծնրադրում է և ասում 21-րդ սաղմոսի 11-րդ տունը.

Մորս արգանդից Քեզ հանձնվեցի
Դու ես իմ Աստվածը:

Ի Քեզ անկայ ես յարգանդէ՝ յորովայնէ
մօր իմոյ.Դու ես Աստուած իմ:

գրկում է երեխային և արևմուտք դառնալով քահանայի հետ միասին երեք անգամ արտասանում է «Հրաժարիմքը»: Եթե մկրտվողը չափահաս է, ինքն է երեք անգամ թնրադրում և ապա քահանայի հետ միասին ասում «Հրաժարիմքը», ընդ որում ձեռքերը պահում են դեպի վար՝ ափերը կոր, իսկ «Հավատամքի» ժամանակ ձեռնամած:

Հրաժարվում ենք սատանայից և
նրա բոլոր խաբեություններից,
պատրանքներից նրա,
խորհուրդներից նրա,
ընթացքից նրա,
չար կամքից նրա,
չար հրեշտակներից նրա,
չար պաշտոնյաներից նրա,
չար կամքը կատարողներից նրա,
և նրա ամբողջ չար զորությունից
հրաժարվելով հրաժարվում ենք:

Հրաժարիմք ի սատանայէ և յամենայն
խաբեութենէ նորա
ի պատրանաց նորա
ի խորհրդոց նորա,
ի գնացից նորա,
ի չար կամաց նորա,
ի չար հրեշտակաց նորա
ի չար պաշտոնէից նորա,
ի չար կամարարաց նորա
և յամենայն չար զօրութենէ նորա
հրաժարելով հրաժարիմք:

Այսպիսով երեխան մեղանչական կյանքից և աշխարհից դառնում է դեպի հավատի Լույսը: Նրա հետ բոլորն էլ գնում են դեպի արևելյան կողմը՝ խորան՝ աստվածգիտության Լույսին: Կարդացվում է Մատթեոսի ավետարանի 28-րդ գլխի 16-20 տները.

> **Իսկ տասնմեկ աշակերտները գնացին Գալիլեա, այն լեռը, ուր պատվիրել էր իրենց Հիսուսը: Եվ տեսնելով Նրան՝ երկրպագեցին Նրան՝ իսկ ոմանք տարակուսեցին: Հիսուսն էլ մոտենալով նրանց ասաց. Ամեն իշխանություն Ինձ տրվեց՝ երկնքում ու երկրի վրա: Ուրեմն գնացեք, բոլոր ազգերին աշակերտ դարձրեք, մկրտեցեք նրանց Հոր, Որդու և սուրբ Հոգու անունով: Սովորեցրեք նրանց պահելու այն ամենը, ինչ որ ձեզ պատվիրեցի, և ահա ամեն օր ես ձեզ հետ եմ՝ մինչև աշխարհի վերջը: Ամեն:**

Եվ ապա բոլորն իրար հետ ասում են «Հավատամքը»: Մկրտության խորհուրդը կատարելուց չի կարելի անտեսել «Հավատամքը», որովհետև այն մկրտվողի քրիստոնեական հավատ ունենալու հայտարարությունն է. նա վկայում և խոստովանում է իր հավատը: Օտարազգիներին չի կարելի մկրտել մինչև չսովորեն և չխոստովանեն «Հավատամքը»: Իսկ երբ մեկը խոստովանի և փափագի եկեղեցու անդամ լինել, այն ժամանակ կարելի է մկրտության խորհուրդը նրա հետ կատարել:

Հավատամքը.

Հավատում ենք մեկ Աստծո՝ Ամենակալ Հորը, Արարչին երկնքի և երկրի, տեսանելի և անտեսանելի բաների:

Եվ մեկ Տիրոջ՝ Հիսուս Քրիստոսին՝ Աստծո Որդուն, ծնված Հայր Աստծուց՝ միածին, այսինքն Հոր էությունից: Աստված է Աստծուց, Լույս՝ Լույսից, Ճշմարիտ Աստված՝ Ճշմարիտ Աստծուց, ծնված, այլ ոչ թե ստեղծված:

Նույն ինքն է՝ բնությամբ Հոր, որով եղավ ամեն բան թե երկնքում, թե երկրի վրա՝ տեսանելի և անտեսանելի:

Որը երկնքից իջավ մեզ՝ մարդկանց համար և մեր փրկության նպատակով, մարմնացավ, մարդացավ, կատարյալ կերպով ծնվեց Սուրբ Կույս Մարիամից՝ Սուրբ Հոգով: Որից էլ իրական, այլ ոչ թե թվացող մարմին առավ, հոգի և միտք և այն ամենը, ինչ որ կա մարդու մեջ:

Հաւատամք ի Մի Աստուած, ի Հայրն ամենակալ, յԱրարիչն երկնի եւ երկրի, երեւելեաց եւ աներեւութից:

Եւ ի Մի Տէր Յիսուս Քրիստոս՝ յՈրդին Աստուծոյ՝ ծնեալն յԱստուծոյ Հօրէ՝ միածին, այսինքն՝ յէութենէ Հօր: Աստուած՝ յԱստուծոյ, Լոյս՝ ի Լուսոյ, Աստուած ճշմարիտ՝ յԱստուծոյ ճշմարտէ, ծնունդ եւ ոչ՝ արարած:

Նոյն Ինքն ի բնութենէ Հօր, Որով ամենայն ինչ եղեւ յերկինս եւ ի վերայ երկրի՝ երեւելիք եւ աներեւոյթք:

Որ յաղագս մեր՝ մարդկան, եւ վասն մերոյ փրկութեան իջեալ յերկնից մարմնացաւ, մարդացաւ, ծնաւ կատարեալպէս ի Մարիամայ սրբոյ Կուսէն Հոգւովն Սրբով:

Որով էառ զմարմին, զհոգի եւ զմիտ, եւ զամենայն, որ ինչ է ի մարդ՝ ճշմարտապէս եւ ոչ՝ կարծեօք:

Զարչարվեց, խաչվեց, թաղվեց, երրորդ օրը հարություն առավ: Նույն մարմնով ելավ երկինք, նստեց Հոր աջ կողմում:

Գալու է նույն մարմնով և Հոր փառքով՝ դատելու ողջերին և մեռածներին և որի թագավորությունն անվախճան է:

Հավատում ենք նաև Սուրբ Հոգուն, որն անեղ է և կատարյալ, որը խոսեց Օրենքի և Մարգարեների գրքերում և Ավետարանում: Որն իջավ Հորդանան, քարոզեց Առաքողի մասին և բնակվեց սուրբերի մեջ: Հավատում ենք նաև մի և ընդհանրական և Առաքելական սուրբ Եկեղեցուն. մեկ մկրտությանը, ապաշխարությանը, մեղքերի քավությանն ու թողությանը:

Մեռելների հարությանը, հոգիների և մարմինների հավիտենական դատաստանին, երկնային արքայությանը և հավիտենական կյանքին:

Զարչարեալ, խաչեալ, թաղեալ, յերրորդ աւուր յարուցեալ, ելեալ ի յերկինս նովին մարմնովն՝ նստաւ ընդ աջմէ Հօր:

Գալոց է նովին մարմնովն եւ փառօք Հօր՝ ի դատել զկենդանիս եւ զմեռեալս, Որոյ Թագաւորութեանն ոչ գոյ վախճան:

Հաւատամք եւ ի Սուրբ Հոգին, յանեղն եւ ի կատարեալն, որ խօսեցաւ յՕրէնս եւ ի Մարգարէս եւ յԱւետարանս. Որ էջն ի Յորդանան, քարոզեաց յԱռաքեալսն եւ բնակեցաւ ի սուրբսն:

Հաւատամք եւ ի մի միայն Ընդհանրական եւ Առաքելական Սուրբ Եկեղեցի: Ի մի մկրտութիւն, յապաշխարութիւն, ի քաւութիւն, եւ ի թողութիւն մեղաց. ի յարութիւնն մեռելոց, ի դատաստանն յաւիտենից, հոգւոց եւ մարմնոց, յարքայութիւնն երկնից, եւ ի կեանսն յաւիտենական:

Սարկավագները երգում են «Բաց մեզ, Տեր, դուռը քո ողորմության» ու բոլորը գալիս են դեպի դաս:

Հետո կնքահայրը երեխան գրկած դասի առջև խոնարհվում է ու «Արեգակն արդարության» շարականը երգելով մկրտվողին առաջնորդում է դեպի Ավազան, որտեղ քահանան ընթերցում է հատվածներ Աստվածաշնչից.

Եզեկել 36. 25-29

> Մաքուր ջուր կսրսկեմ ձեր վրա,
> ու կմաքրվեք ձեր պղծություններից,
> ու ձեր բոլոր կուռքերից:
> Ձեզ նոր սիրտ կտամ, նոր Հոգի կտամ ձեզ.
> Ձեր մարմիններից քարեղեն սիրտը կհանեմ,
> մարմնեղեն սիրտ կտամ ես ձեզ:
> Իմ Հոգին ձեր ներսը կդնեմ,
> ձեզ իմ օրենքներում քայլել կտամ,
> որ իրավունքներս պահեք ու ի գործ դնեք:
> Կապրեք այն երկրում, որ ձեր հայրերին եմ տվել:
> Իմ ժողովուրդը կլինեք դուք,
> ես էլ ձեր Աստվածը կլինեմ:
> Ձեր բոլոր անմաքրություններից ձեզ կազատեմ,
> հացին կկանչեմ ու կշատացնեմ,
> ու սով չեմ բերի ձեր վրա:

Գաղատացիներին 3. 24-29

Այսպիսով Օրենքը մեր համար դաստիարակ եղավ Քրիստոսին գալու, որպեսզի հավատով արդարանանք, իսկ երբ հավատը եկավ, այլևս դաստիարակի հսկողության տակ չենք:

Դուք բոլորդ Աստծո որդիներ եք՝ Քրիստոս Հիսուսի հավատով, որովհետև դուք բոլորդ, որ Քրիստոսով մկրտվեցիք՝ Քրիստոս հագաք: Չկա ոչ հրեա, ոչ՝ հույն, չկա ոչ ծառա, ոչ՝ ազատ, չկա ոչ արու, ոչ՝ էգ. Քրիստոս Հիսուսում դուք բոլորդ մի եք: Բայց եթե դուք Քրիստոսինն եք, ուրեմն Աբրահամի սերունդն եք և ըստ խոստման՝ ժառանգորդներ:

Ավետարան ըստ Հովհաննեսի 3. 1-8

Եվ փարիսեցիների մեջ Նիկոդեմոս անունով մի մարդ կար, որ հրեաների իշխանավոր էր: Սա գիշերով եկավ նրա մոտ ու նրան ասաց. «Ռաբբի՛, գիտենք, որ Աստծուց ես եկել որպես վարդապետ, որովհետև ոչ ոք չի կարող կատարել այն նշանները, որ դու ես անում, եթե Աստված նրա հետ չլինի»: Հիսուս պատասխանեց և ասաց նրան. «Ճշմարիտ, ճշմարիտ եմ ասում քեզ, եթե մեկը վերստին չծնվի, չի կարող Աստծու արքայությունը տեսնել»:

Նիկոդեմոսը նրան ասաց. «Ինչպե՞ս կարող է ծնվել մի մարդ, որ ծեր է. մթե՞ կարելի՞ է իր մոր որովայնը կրկին անգամ մտնել ու ծնվել»: Հիսուս պատասխան տվեց և ասաց. «Ճշմարիտ, ճշմարիտ եմ ասում քեզ, եթե մեկը ջրից ու Հոգուց չծնվի, չի կարող Աստծու արքայությունը մտնել. որովհետև մարմնից ծնվածը մարմին է, իսկ Հոգուց ծնվածը՝ հոգի: Դու մի՛ զարմացիր, որ քեզ ասացի՝ պետք է ձեզ վերստին ծնվել. որովհետև քամին ուր ուզում է՝ փչում է, և նրա ձայնը լսում ես, բայց չգիտես որտեղից է գալիս կամ ուր է գնում. այսպես է և ամեն ոք, որ Հոգուց է ծնված:

Այնուհետև քահանան սաղմոս 30՝ **«Տիրոջ ձայնը ջրերի վրա է»** *ասելով, ջուր է լցնում Ավազանը: Հովհաննես Երզնկացին այսպես է ավելացնում.*

Այսինքն այն նույն աստվածային Ձայնն է, որ արարչության պահին ջրերի վրա էր և ասում էր. Ջրերը թող կենդանի շունչ ունեցող զեռուներ հանեն, որը և եղավ ըստ Աստծո հրամանի:

Դա այն նույն ձայնն էր, որ Քրիստոսի մկրտության ժամանակ Հորդանանում լսվեց՝ Դա է Իմ սիրելի Որդին, նույն ձայն է այս ջրի վրա, որ ծնունդ է տալիս այս երեխային, որը հողեղեն մարդու որդի է, իսկ այսուհետև Աստծո որդի է լինելու:

(Խրատներ, էջ 150)

Որից հետո աղոթում է.

Առաքիր քո Սուրբ Հոգին այս ջրի վրա և սրբիր այն. ինչպես սրբեցիր այն իջնելով Հորդանան գետը... և չնորհիր, որ այս ջուրը, որում մկրտվելու է հիմա, մեղքերի թողության և Սուրբ Հոգին ընդունելու համար, Երկնավոր Հորը որդեգրվելու և երկնքի Թագավորությունը ժառանգելու համար լինի:

Առաքեա՛ զՀոգիդ քո Սուրբ ի ջուրս զայս, և սրբեա՛ զսա, որպէս սրբեցէր զՅորդանան իջանելով... և չնորհեա՛ սմա զջուրս զայս՝ յորում մկրտի յայժմ, ի թողութիւն մեղաց՝ յընդունելութիւն Հոգւոյդ Սրբոյ. յորդեգրութիւն Հօրդ երկնաւորի՝ և ի ժառանգութիւն Արքայութեանդ Երկնից:

Այդ պահին երեխային մերկացնում են և բերում քահանայի մոտ, որը խաչով և «օրհնեսցի և սրբեսցի» ծանոթ բանաձևը երեք անգամ կրկնելով օրհնում է ջուրը: Որից հետո սրբալույս մեռոնը խաչանման հեղում է ջրի մեջ ու երգում.*

Բարձունքներից աղավնու նման առաքեց Սուրբ Հոգին, որը մեծաձայն հնչմամբ, մինչև աշակերտները նստել էին Վերնատանը, նրանց էջյրելով իջավ նրանց վրա:

Առաքելոյ աղաւնւոյ իջանելով մեծաձայն հնչմամբ ի բարձանց. ի նմանութիւն լուսոյ փայլման հրազինեաց անկիզելի զաշակերտսն. մինչդեռ նստեին ի սուրբ վերնատանն:

Որից հետո աղոթում է.

Մերկացրու սրան մեղքի հնությունից և նորոգիր նոր կյանքով և Քրիստոսի փառքով նորոգվելու համար լցրու Սուրբ Հոգով:

Մերկեա՛ ի սմանէ զհնութիւն մեղաց, և նորոգեա՛ ի կեանսն նորս, և լցո՛ զօրութեամբ Հոգւոյդ Սրբոյ ի նորոգութիւն փառաց Քրիստոսի քոյ:

Քահանան հարցնում է.

- Երեխան ի՞նչ է խնդրում:

- Երեխայս զի՞նչ խնդրէ:

Կնքահայրը պատասխանում է.

- Հավատ, հույս, սեր և մկրտություն: Մկրտվել և արդարանալ, սրբվել մեղքերից, ազատվել դևերից և ծառայել Աստծուն:

- Հաւատք, Յոյս, Սէր և մկրտութիւն: Մկրտիլ և արդարանալ. սրբիլ ի մեղաց, ազատիլ ի դիւաց և ծառայել Աստուծոյ:

Այս հարցը ու պատասխանը կրկնվում է երեք անգամ, եթե մկրտվողը չափահաս է, ինքն է պատասխանում: Արարողությունից առաջ կնքահորը կամ չափահաս մկրտվողին պետք է բացատրել թե իրենք ինչ են անելու և ասելու: Եթե իրենց ուղղվելիք հարցերի պատասխանը չգիտեն, անհրաժեշտ է սովորեցնել կամ էլ գրավոր

** Հովհաննես Երզնկացին այս առիթով ասում է. Եվ մեռոնը խաչանման կաթեցնում է ջրի մեջ, քանի որ մեռոնը Քրիստոսն է, իսկ խաչաձևը՝ Քրիստոսի խաչը: Ինչպես Քրիստոս խաչի վրա մեռավ, այնպես էլ քրիստոնյան խորհրդաբար ավազանում Քրիստոսին խաչակից է լինում, որպես թե մեռած՝ մեղքի և աշխարհի հանդեպ և կենդանի է Քրիստոսի համար՝ բարեգործության: (Խրատներ: էջ 150)*

հանձնել իրենց:

Սրանից հետո քահանան ասում է.

-Ըստ քո հավատի թող լինի քեզ:

Ապա անունն է դնում.

(Այսինչ անուն) Աստծո ծառան եկել է երեխայությունից մկրտվելու: Մկրտվում է Հոր անունով, -

(Այս անուն) ծառայս Աստուծոյ, եկեալ երեխայութենէ ի մկրտութիւն, մկրտի յանուն Հօր, -

այս ասելուց երեխային իջեցնում է ավազանի մեջ՝ ձախ ձեռքով բռնելով պարանոցը, աջով ոտքերը և թաղում ջրի մեջ մինչև ծոծորակը ու երեխային հանում է ջրից:

Ընկղմում է երկրորդ անգամ և ասում.

Որդու անունով, -

և Որդւոյ, -

Նորից երեխային հանում է ջրից, երրորդ անգամ ընկղմում և ասում.

և Սուրբ Հոգու:

Գնված է Քրիստոսի արյամբ մեղքի ծառայությունից, ընդունում է երկնավոր Հոր որդեգրությունը, դառնում ժառանգակիցը Քրիստոսի և Սուրբ Հոգու տաճար:

և Հոգւոյն Սրբոյ:

Գնեալ արեամբն Քրիստոսի ի ծառայութենէ մեղաց, ընդունի զորդեգրութիւն Հօրն երկնաւորի, լինել ժառանգակից Քրիստոսի, տաճար Հոգւոյն Սրբոյն:

Անհրաժեշտ է, որ ավազանը բավականին խորը լինի, որպեսզի երեխան թաղվի մեջը: Դվինի Բ ժողովի 15-րդ կանոնը հրահանգում է.

...մկրտվողի հասակը բավականին պետք է ծածկվի ջրով:

Այսպիսով, Ամենասուրբ Երրորդության անունով կանչվում է մեկ անգամ՝ եռակի ընկղմամբ: Քահանան ավազանից հանելով երեխային երեք ափ ջուր է լցնում երեսին ու գլխին ասելով.

Դուք, որ Քրիստոսով մկրտվեցիք, Քրիստոսը հագաք: Ալելուիա: Եվ դուք, որ Հորից լուսավորվեցիք, Սուրբ Հոգին է, որ բերկրում է ձեր մեջ: Ալելուիա:

Որք է ի Քրիստոս մկրտեցայք, զՔրիստոս զգեցեա՛լ եք, ալէլուիա: Որ ի Հայր լուսաւորեցայք, սուրբ Հոգին բերկրեսցի ի ձեզ. ալէլուիա:

Եթե մկրտվողները մեկից ավել են, բոլորը միևնույն ավազանում պետք է մկրտվեն: Եթե երեխան վարակիչ հիվանդություն ունի, կարելի է ավազանում մկրտել այն պայմանով միայն, որ հետո ավազանը լվացվի տաք ջրով և օճառով: Այս դեպքում հարմար է, որ երեխան տաշտում մկրտվի:

Եթե մկրտվողը չափահաս է, պետք է լրիվ մերկանա, գլխից մինչև ոտքերը երկարող շապիկ հագնի և նստի խոշոր տաշտի մեջ: Քահանան երեք անգամ թասով ջուր է թափում նրա գլխին՝ թրջելով նրա ամբողջ մարմինը և արտասանում մկրտության բանաձևը: Յուրաքանչյուր հեղումից հետո մկրտվողը ոտքի է կանգնում և նորից նստում: Եթե մկրտությունը կատարվում է հոսող ջրում, մկրտվողը երեք անգամ ինքն իրեն ընկղմում է ջրի մեջ, երբ քահանան ասում է մկրտության բանաձևը: Մկրտող քահանան նախօրոք պետք եղածը բացատրում է չափահաս մկրտվողին, որպեսզի այն տպավորությունը չստացվի, թե մկրտվողն է ինքն իրեն մկրտում, այլ պարզապես քահանայի գործն է հեշտացնում:*

Դրանից հետո երգում են շարականը.

Դու, որ համագոյ ես Հորը և Որդուն ...Քեզնով են արարածները կյանքի համար ջրից ծնվում: Ահա և այսօր Աստծո մի որդի էլ ջրից ծնվեց, ով Սուրբ Հոգի Ատված, ողորմյա մեզ:

Որ համագոյդ ես Հօր և Որդւոյ ...Որով կենդանածնալք ի ջուրս արարածք: Որդիս Աստուծոյ այսօր ծնանիս ի ջուրց. Հոգի Սուրբ Աստուած, ողորմեա:

Այստեղ կարդացվում է Հռոմեացիներին Պողոս Սրբազան Առաքյալի ուղղված Նամակի 6 -րդ գլխի 3-11 տները.

Զգիտե՞ք, թէ մենք բոլորս, որ մկրտվեցինք Հիսուս Քրիստոսով, նրա մահո՛վ է, որ մկրտվեցինք:

Մկրտությամբ թաղվեցինք նրա հետ մահվան մեջ, որպեսզի, ինչպես որ Քրիստոս մեռելներից հարություն առավ Հոր փառքով, նույնպես և մենք քայլենք նոր կյանքով. որովհետև, եթե նրա մահվան նմանությամբ տնկակից եղանք նրան, պիտի լինենք նաև նրա հարության նմանությամբ: Այս իմացե՛ք, որ մեր միջի հին մարդը խաչվեց նրա հետ, որպեսզի քայքայվի մեղքի մարմինը, և այլևս մենք չծառայենք մեղքին. որովհետև, ով մեռնում է, ազատ է մեղքից: Իսկ եթե մեռանք Քրիստոսի հետ, հավատում ենք, թե նրա հետ էլ կապրենք: Գիտենք, թե Քրիստոս մեռելներից հարություն առած լինելով՝ այսուհետև չի մեռնի, և մահը նրան այլևս չի տիրի. որովհետև նա, որ մեռավ, մեղքի համար մեռավ մեկընդմիշտ, և նա, որ կենդանի է, կենդանի է Աստծու համար: Նույնպես և դուք ձեզ մեռած համարեցե՛ք մեղքի համար, բայց կենդանի՝ Աստծու համար, մեր Տեր Քրիստոս Հիսուսով:

**Ըստ Պարտավի ժողովի 8-րդ կանոնի, դատապարտվում են այն տգետ և անմիտ քահանաները, ովքեր մկրտության ջուրը ոտնատակ և անմաքուր տեղ են լցնում և հրահանգվում է, որ սրբագործված ջուրը մկրտության ավազանի մեջ թափեն, իսկ ուր ավազան չկա ոտնատակից հեռու մի տեղ:*

Այսպես ավարտվում է մկրտությունը, որով ըստ Գրիգոր Տաթևացու ընդունում ենք հետևյալ օրհնությունները:

Երանություններ, որ ընդունեցինք Ավագանում.
Նախ -*Սկզբնական մեղքերի թողությունը:*
Երկրորդ - *Պատիժներից ազատվելը:*
Երրորդ - *Արդարության շնորհը:*
Չորրորդ - *Ներգործման սրբությունը:*
Հինգերորդ - *Փրկություն թշնամուց:*
Վեցերորդ - *Միածնին եղբայր լինելը:*
Յոթերորդ - *Սուրբ Հոգու գանագան պարգևները:*
Մկրտությանն անմիջապես հաջորդում է Դրոշմի խորհուրդը:

ԴՐՈՇՄ

ԽՈՐՀՐԴԻ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Դրոշմը Սուրբ Հոգին ընդունելու խորհուրդն է. յուրաքանչյուր հավատացյալ անհատի համար Հոգեգալուստ. Սուրբ Հոգու իջնելը քրիստոնյային շնորհված կնիքի ընդունման խորհուրդն է: Դրոշմը մկրտության ավարտն է ու լրումը: Մենք սովորաբար օգտագործում ենք կնունք բառը, որն առաջացել է կնքել բայից, այսինքն կնիք դնել:

Դրոշմով Սուրբ Հոգու շնորհը և պարգևները տրվում են դրոշմ ընդունողին: Մկրտությամբ նույնպես շնորհ է տրվում: Ո՞րն այս երկուսի տարբերությունը: Մկրտությամբ մարդն ընդունում է Սուրբ Հոգու հիմնականում մաքրվելու, Աստծու որդեգրվելու և սկզբնական մեղքը քավելու համար: Իսկ դրոշմով Սուրբ Հոգին և նրա շնորհները տրվում են քրիստոնեական կյանքի մեջ զորանալու համար: Մկրտությամբ սրբվում ենք մեր մեղքերից, վերստին ծնված, մտնում նոր կյանք: Իսկ Դրոշմը զորացնում է մեր հոգիները, լուսավորում մեր հոգեկան կարողությունները, զինում է*

* *Այն ամեն դրականը, որ կա մարդու մեջ, պիղծ է և միայն խաչով անցնելուց է սրբվում և խաչի կնիքն ունենալով է ընդունելի և պտղաբեր դառնում Աստծո համար:*

մեզ ընդիմանալու կյանքի բոլոր փորձություններին և թշնամու հարձակումներին:

Մարմնի տասներեք մասերից յուրաքանչյուրին, որ օծում են, տրվում է հատուկ շնորհ.

1. Ճակատի կնիքը երկնային անապական պարգևների համար է:

2, 3. Աչքերինը - լուսավորության համար, որ երբեք մահ չտեսնեն:

4, 5. Ականջներինը - Աստծո պատվիրանները լսելու համար:

6. Հոտոտելիքինը - կյանքի անուշության բույրը հոտոտելու համար:

7. Բերանինը - որ ամուր մնա շրթունքների պահպանության ներքո:

8, 9. Ձեռքերինը - բոլոր առաքինի և բարի գործերը գործելու համար:

10. Սրտինը - որ սրբության մեջ հաստատվի և ճշմարիտ Հոգին իր մեջ նորոգվի՝ թարմանա:

11. Մեջքինը - որ լինի ամուր վահան, չարի բոլոր թունավոր նետերին դիմադրելու համար:

12, 13. Ոտքերինը - որ նրանք անսասան ընթանան հավիտենական կյանքի ճանապարհով:

Առաջին դարում բոլոր եկեղեցիներում մկրտությունն ու դրոշմը միևնույն ծեսի առանձին և անբաժանելի մասերն էին, ինչպես Սուրբ Պատարագում հացն ու գինին անբաժան են մատակարարվում: Քրիստոսի մկրտվելուց հետո Սուրբ Հոգին աղավնակերպ իջավ նրա վրա: Այս ի նկատի ունենալով Եկեղեցին միացրեց մկրտությունն ու դրոշմը:

Առաքյալները մկրտությունից անմիջապես հետո ձեռք էին դնում մկրտվածների վրա, որպեսզի Սուրբ Հոգին ստանան (Տես Գործք Առաքելոց 8. 11-17, 19. 1-6, Եբրայացիներին 6.2): Հետագայում Եկեղեցում մեռոնը (մյուռոնը) գործածվեց որպես Սուրբ Հոգու իջնելու և ընդունելու միջոց: Այսպիսով, դրոշմի խորհուրդը կատարվում էր կամ ձեռք դնելով, կամ էլ սրբալույս մեռոնի օծմամբ: Հայոց Եկեղեցին, ինչպես նաև արևելյան մյուս եկեղեցիները, դրոշմի խորհուրդը կատարում է մկրտությունից անմիջապես հետո՝ ըստ նախկին տիեզերական եկեղեցու սովորության՝ համաձայն առաքյալների և սուրբ հայրերի օրենքների:

ԽՈՐՀՐԴԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

Դրոշմը, ինչպես և մկրտությունը, չի կարելի կրկնել. եկեղեցին այն մատակարարում է միայն չունեցողներին: Օրինակ, երբ վավերական մկրտվածները ուզենան Հայոց Եկեղեցու անդամ լինել, պետք է անպայման դրոշմվեն, որովհետև թեև մկրտված են, բայց դրոշմված չեն:

Ինչպես տեսանք դրոշմի խորհուրդը ավարտումն ու լրումն է մկրտության: Այն ստացողը և Քրիստոսի Սուրբ Մարմնին և Արյանը հաղորդվողն է միայն դառնում կատարյալ քրիստոնյա, հետևաբար կարող է ընդունել մյուս խորհուրդները: Օրինակ, չդրոշմված մեկը չի կարող պսակվել Հայոց Եկեղեցում, անհրաժեշտ է չկնքվածը դրոշմվի և ապա մասնակցի մյուս խորհուրդներին: Օծման պահին, երբ քահանան արտասանում է «Կնիքս Հիսուսի Քրիստոսի», սա արդեն անհատական Հոգեգալուստ է յուրաքանչյուր քրիստոնյայի համար:

Հայաստանեայց Եկեղեցում, դրոշմի խորհուրդը կատարում է քահանան կամ եպիսկոպոսը:

ԽՈՐՀՐԴԻ ԿԱՏԱՐՈՒՄԸ

Դրոշմի առաջին մասը՝ դրոշմվողի զգայարանները և անդամները օծվում են սրբալույս մեռոնով, որով էլ նրանցից յուրաքանչյուրին տրվում է մասնավոր շնորհ:

Երկրորդ մասը՝ ընծայում Սուրբ Սեղանին, նվիրում Աստծուն՝ երեք անգամ երկրպագելով:

Երրորդ մասը՝ լրումն է այս բոլորի՝ Քրիստոսի Սուրբ Մարմնի և Արյան ճաշակումն է. նոր՝ աստվածային անվախճան կյանքի ընդունումը:

Այս ամենով երեխան լինում է կատարյալ քրիստոնյա և սուրբ եկեղեցու անդամ:

«Աղբյուր կյանքի, բաշխող շնորհի» շարականով սկսվում է խորհրդակատարումը: Քահանան աղոթքից հետո սուրբ յուղը լցնում է մեռոնատուփի մեջ և երգում է.

Որ ի՛ջար սուրբ Վերնատուն և օծեցիր առաքյալներին օծումով այս: Եվ այս օծումով հողեղենները վերատեղծեցիր Աստո որդիների, երկնային շնորհներդ լցրու նաև այս յուղով:

Որ ի վերնատունն սուրբ ի՛ջանելով յառաքեալսն օծումն օծելոց. և օծմամբս այսու վերատեղծէր նոքօք զհողեղէնս, որդիս Աստուծոյ. հեղ ընդ այս իւղոյս զերկնային քո զշնորհս:

Ապա հանուն Հիսուս Քրիստոսի կնքվում է մկրտվածի ճակատը, աչքերը, ականջները, քիթը, բերանը, ձեռքերը, սիրտը, մեջքը և ոտքերը: Քահանան մարմնի տասներեք մասերը դրոշմելով աղոթում է, որ նրանցից յուրաքանչյուրը ստանա վերոհիշյալ շնորհները: Հետո խաչակնքում է և ասում.

Խաղաղություն ընդ քեզ, փրկյալդ Աստծո:	Խաղաղութիւն ընդ քեզ փրկեալդ Աստուծոյ
Խաղաղություն ընդ քեզ, օծյալդ Աստծո:	Խաղաղութիւն ընդ քեզ օծեալդ Աստուծոյ:

Կնքահայրը պատասխանում է.

Եվ քո հոգու հետ:	Եւ ընդ հոգւոյդ քում:

Ապա նորակնունք երեխային հագցնում են նոր սպիտակզգեստներ, որպես հանդերձ փրկության և պատմուճան ուրախության: Գլխին կապում են նարոտը, որ է «շնորհի պսակը ...չփչացող զենք հակառակորդի դեմ»: Քահանան երկու մոմ է տալիս կնքահոր ձեռքը, իբրև կնքվողի լուսավորելու խորհրդանշան և որպեսզի աստվածային լույսը սրբալույս մեռոնով նրա կյանքում առաջնորդ լինի: Եթե կնքվողը չափահաս է, ապա ինքն է բռնում մոմերը:

Երուսաղեմի Ձեռագրատան 289 Մաշտոցում Մկրտության կանոնի մեջ հետօծման արարողությունը այսպես է նկարագրվում.

Քահանա երեք անգամ խաչակնքում է երեխային և ասում.

Խաղաղություն ընդ քեզ փրկյալդ Աստծո:	Խաղաղութիւն ընդ քեզ փրկեալդ Աստուծոյ:

Կնքահայրը պատասխանում է

- Եվ քո հոգու հետ:	Եւ ընդ հոգւոյդ քում:

Ապա այրում են հին շորերը և նորը հագցնելով ասում

- Հագցրու սրան հանդերձ փրկության և ուրախության պատմուճան մեր Տեր Հիսուս Քրիստոսի շնորհով:	Զգեցո՛ սմա հանդերձ փրկութեան և պատմուճան ուրախութեան շնորհոք Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի:

Հետո կնգուղը գլխին են դնում և ասում.

- Դիր, Տեր, փրկության սաղավարտ և շնորհի պսակ սրա գլխին շնորհով և մարդասիրությամբ...	- Դիր Տէր սաղաւարտ փրկութեան և պսակ շնորհնց ի գլուխ սորա շնորհօք և մարդասիրութեամբ...

Հետո նարոտը կապում են վզին և ասում.

- Ով Տեր, արդարություն հագցրու սրա պարանոցին և սրբիր մեղքի ամեն աղտեղությունից շնորհով և մարդասիրությամբ ...	Զգեցո՛, Տէր, պարանոցի սորա զարդարութիւն և սրբեա՛ յամենայն աղտեղութիւնէ մեղաց շնորհօք և մարդասիրութեամբ...

Ծածկում են սպիտակ հանդերձով և ասում.

Սպիտակ հագնված աներկյուղ մոտենաս Աստծո Գահին, այլևս մեր Տեր Հիսուս Քրիստոսի հետ ժառանգակից ես հավիտենական կյանքի:

Զգեցեալ սպիտակ գնացես անվեմուղ առաջի Աթոռոյն Աստուծոյ. լինել ընդ Տեառն մեռոյ Յիսուսի Քրիստոսի և ժառանգակից յաւիտենական կենացն:

Հետո կանաչ և կարմիր մոմերը ձեռքն են տալիս և ասում.

- Առ լապտերն հավատի և բարի գործերի, քանի որ Երկնավոր Փեսայի Գալստին կթուլատրեն մտնել լուսո առագաստը՝ վայելելու հավիտենական կյանքը:

- Առ զլապտեր հաւատոյ և գործոց բարեաց, զի ի գալ Երկնաւոր Փեսային տացին մտանել ի յառագաստն լուսոյ և վայելել ի կեանսն յաւիտենական:

Հետո սաղմոսելով քահանան գրկում և բեմ է հանում երեխային՝ երեք անգամ երկրպագում Սուրբ սեղանի առջև և ասում.

(Այս անուն) Քրիստոսի ծառան եկել է երեխայությունից մկրտության. մկրտությունից երկրպագության: Երկրպագում է Սուրբ Սեղանին, երկրպագում է Սուրբ Խորանին, երկրպագում է Սուրբ Ավազանին՝ մերկացավ տնօրենությունից և հագավ աստվածգիտության լույսը:

(Այս անուն) ծառայս Քրիստոսի՝ եկեալ յերեխայութենէ ի մկրտութիւն. մկրտութենէ յերկրպագութիւն: Երկրպագէ Սուրբ Սեղանոյս, երկրպագէ Սուրբ Խորանիս, երկրպագէ Սուրբ Աւազանիս՝ որ մերկացաւ զանօրէնութիւն և զգեցաւ զլոյս աստվածագիտութեան:

Հետո հաղորդություն է տալիս և ասում.

Մարմինը և Արյունը մեր Տեր Հիսուս Քրիստոսի թող լինի քեզ համար փրկություն և առաջնորդ անվախճան կյանքի: Ամեն:

Մարմին և Արիւն Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի. եղիցի քեզ փրկութիւն և առաջնորդ յանվախճան կեանսն. ամէն:

Երեխային կնքահորը հանձնելուց հետո քահանան աղոթում է.

Ահա ստացավ քո (այս անունը) ծառան սրբության օծումը, որի համար աղաչում ենք, Տեր մի՛ զնջիր սրան քո կյանքի աշակերտությունից:

Ահա ընկալաւ (այս անուն) ծառայս քո զօծումն սրբութեան քո, վասն որոյ աղաչեմք զքեզ Տէր, մի՛ զնջեսցի սա ի դպրութենէ քումմէ կենաց:

Համբուրում են նոր մկրտվածին և օծվածին և այսպիսով նա ընդունվում է Հայաստանյայց եկեղեցու ծոցը և դառնում նրա անբաժան անդամը:

«Պահպանիչով» և «Հայր մերով» արարողությունը ավարտվում է:

Հավատացյալների հույսը և նրանց պահապանը եղող Քրիստոս Աստված մեր, քո ծառային պահիր և պահպանիր քո սուրբ և պատվական խաչի հովանու ներքո խաղաղությամբ: Փրկիր տեսանելի և անտեսանելի թշնամիներից:

Արժանացրու, որ գոհանալով փառավորենք Քեզ, Հոր և Սուրբ Հոգուն այժմ և միշտ հավիտյանս հավիտենից:

Ամեն:

Պահպանիչ և յոյս հաւատեցելոցն Քրիստոս Աստուած մեր, պահեա՛ զծառայս քո ընդ հովանաւ սուրբ և պատուական խաչի քո ի խաղաղութեան, փրկեա՛ յերեւելի և յաներեւոյթ թշնամւոյն:

Արժանաւորեա գոհութեամբ փառաւորել զՔեզ, ընդ Հօր և ընդ Սրբոյ Հոգւոյդ, այժմ և միշտ և յաւիտենից:

Ամէն:

Մկրտության առաջին մասում՝ ԱՊԱՇԽԱՐՈՒԹՅԱՆ ժամանակ Կարդացվող սաղմոսներն ու աղոթքները

Հայր մեր որ երկնքում ես,
սուրբ լինի Քո անունը,
Քո թագավորությունը գա
Քո կամքը լինի երկրի վրա,
ինչպես որ երկնքում է:
Մեր ամենօրյա հացը
տուր մեզ այսօր,
ներիր մեր պարտքերը,
ինչպես մենք ներում ենք
մեզ պարտք եղողներին,
և մի տար մեզ
փորձության
այլ փրկիր մեզ չարից, քանի որ
Քոնն է թագավորությունը
և զորությունը և փառքը
հավիտյանս հավիտենից. Ամեն:

Հա՛յր մեր, որ յերկինս,
սուրբ եղիցի անուն Քո,
եկեսցէ արքայութիւն Քո,
եղիցին կամք Քո
որպես յերկինս եւ յերկրի:
Զհաց մեր հանապազորդ
տո՛ւր մեզ այսօր
եւ թո՛ղ մեզ զպարտիս մեր,
որպէս եւ մեք թողումք
մերոց պարտապանաց:
Եւ մի՛ տանիր զմեզ
ի փորձութիւն,
այլ փրկեա՛ զմեզ ի չարէն,
զի Քո է արքայութիւն եւ
զօրութիւն եւ փառք
յաւիտեանս. Ամեն:

Օրհնյալ Հոգիդ Սուրբ Աստված ճշմարիտ:

Սաղմոս 50

1. Ողորմիր ինձ ով Աստված,
Քո մեծ ողորմությամբ,
Քո առատ կարեկցությամբ
Զնջիր իմ հանցանքները:
2. Անօրենությունս իսպառ լվա
Եվ իմ մեղքից ինձ սրբիր,
3. Քանի որ գիտակցում եմ հանցանքներս
Եվ իմ մեղքը միշտ իմ առջևս է:
4. Քո դեմ, միայն Քո դեմ մեղք գործեցի

Եվ արեցի-ինչ որ չար է Քո աչքերի առջև:
Որպեսզի արդար լինես Քո խոսքերիդ մեջ
Եվ հաղթող՝ դատելուդ ժամանակ:
5. Անօրենությամբ ինձ հղացավ
Ու մեղքով ծնեց մայրն իմ:
6. Ահա, ճշմարտություն ես ուզում իմ ներսում,
Ծածուկ տեղում իմաստություն սովորեցնում:
7. Մաքրիր ինձ զոպայի մշտիկով և մաքուր կլինեմ:
8. Ցնծություն և ուրախություն թող լսեմ,
Տառապյալ ոսկորներս թող ցնծան:
9. Իմ մեղքերից երեսդ ծածկիր
Ու բոլոր անօրենություններս ջնջիր:
10. Իմ մեջ մաքուր սիրտ ստեղծիր, ով Աստված,
Եվ իմ ներսում ուղիղ հոգի նորոգիր:
11. Քո ներկայությունից մի զրկիր ինձ,
Եվ Քո Սուրբ Հոգին ինձանից մի հանիր:
12. Վերադարձրու ինձ Քո փրկության ցնծությունը,
Հոժարակամ Հոգին թող ինձ հաստատի
13. Հանցավորներին կսովորեցնեմ Քո ճամփաները,
Ու մեղավորները Քեզ մոտ կվերադառնան:
14. Արյունահեղությունից փրկիր ինձ, ով Աստված,
Ինձ փրկող Աստված,
Եվ լեզուս ցնծությամբ կերգի
Քո արդարությունը:
15. Տեր, եթե շրթունքն իմ բանաս,
Բերանս կհռչակի Քո Գովքը,
16. Զոհի չես հաճում, որ մատուցեմ,
Ողջակեզի էլ չես հավանում.
17. Աստծո զոհը փշրված հոգին է,
Փշրված ու խոնարհ սիրտը, ով Աստված,
Դու չես արհամարի:
18. Բարյացկամությամբդ, ով Տեր,
Սիոնին բարիք արա,
Երուսաղեմի պարիսպները շինիր:
19. Այնժամ զվարակներ կմատուցվեն Զոհասեղանիդ:

Փառք Հոր և Որդվո և Հոգվույն Սրբո, այժմ և միշտ և հավիտյանս հավիտենից: Ամեն:

Եվ ևս խաղաղության զՏեր աղաչեսցուք:

Օրհնություն և փառք Հոր և Որդվո և Հոգվույն Սրբո, այժմ և միշտ և հավիտյանս հավիտենից: Ամեն:

ՍԱՂՄՈՍ 130

1. Սիրտս չգոռոզացավ, ով Տեր,
Աչքերս էլ չբարձրացրի.
Ես մեծամեծ բաների
Եվ ինձ համար աքանչելի բաների հետ
Առնչություն չունեցա:
2. Այլ իմ անձը հանդարտեցրի ու հանգստացրի
Մոր կաթից կտրած մանկան պես եմ:
Կաթից կտրած մանկան պես իմ ներսը:
3. Իսրայելը թող Տիրոջը հուսա
Այսուհետև մինչև հավիտյան:

ՍԱՂՄՈՍ 24

1. Դեպ Քեզ բարձրացրի իմ անձը, ով Տեր,
2. Քեզ հուսացի, Աստված իմ, մի թող, որ ես ամաչեմ
Եվ մի թող, որ թշնամիներս ծիծաղեն իմ վրա:
3. Քեզ ամեն հուսացողը թող չամաչի,
Ունայնությամբ անօրենություն գործողները թող ամաչեն:
4. Ցույց տուր, ով Տեր, Քո ճամփեքը ինձ,
Շավիղներդ սովորեցրու:
5. Ճշմարտությունդ առաջնորդի ու ինձ սովորեցրու,
Քանի որ Դու ես իմ Փրկիչը՝ Աստվածս.
Իմ հույսն ամեն օր Քո վրա է:
6. Հիշիր, ով Տեր, գթությունները Քո,
Քանի որ նրանք հավիտյան են:

Մանկությանս մեղքերն ու անգետ արարքներս մի հիշիր:
7. Հիշիր ինձ, ով Տեր, ըստ ողորմության Քո,
Քանի որ բարի ես Դու
8. Բարի և ուղիղ է Տերը,
Դրա համար էլ կրթում է մեղավորներին իրենց
ճամփաներում:
9. Արդարության է առաջնորդում հեզերին:
Սովորեցնում է հեզերին Իր ճամփաները:
10. Տիրոջ բոլոր ճամփաները ողորմած և ճշմարիտ են
Նրա ուխտն ու պատգամները պահողների համար:
11. Քո անվան համար, ով Տեր, քավիր իմ անօրենությունը,
Չնայած որ մեծ է:
12. Ո՞վ է Տիրոջից վախեցող մարդը:
Նրա համար ընտրված ճամփին կկրթի նրան:
13. Նա բարության մեջ պետք է բնակվի,
Նրա սերունդն էլ երկիրը կժառանգի:
14. Իրենից վախեցողների հետ մտերիմ է Տերը
Եվ Իր Ուխտն է ճանաչեցնում նրանց:
15. Աչքերս միշտ Տիրոջն են հառած,
Միայն նա կհանի ոտքերս որոգայթից:
16. Տես ինձ և ողորմիր ինձ,
Քանի որ մենակ եմ ես ու տրտմած:
17. Սրտիս նեղությունները բազում են,
Իմ վշտերից ինձ դուրս հանիր:
18. Տես տրտմությունս ու կսկիծս,
Իմ բոլոր մեղքերը Դու ներիր:
19. Տես ինչ շատ են թշնամիներս.
Սաստիկ ատելությամբ ատում են ինձ:
20. Պահիր իմ անձն ու փրկիր ինձ.
Թող որ չամաչեմ Քեզ հուսալուս համար:
21 Թող անարատությունն ու ուղղությունը
Հովանավոր են ինձ,
Քանի որ Քեզ եմ հուսացել:
22. Փրկագնիր, ով Աստված, Իսրայելը
Իր բոլոր նեղություններից:

ՍԱՂՄՈՍ 25

1. Պաշպանի ինձ, Տեր,
Քանի որ անարատ ընթացա՝
Տիրոջն եմ հուսացել. անսասան եմ:
2. Փորձիր ինձ, Տեր, և քննիր ինձ,
Քննիր իմ սիրտն ու միտքը:
3. Ողորմությունդ աչքերիս առջև է,
Ես էլ ճշմարտությունդ մեջ եմ ընթանում:
4. Ունայն մարդկանց հետ չեմ նստում,
Կեղծավորների հետ չեմ գնում:
5. Ատում եմ հավաքը չարերի,
Եվ մերժում՝ չեմ նստում ամբարիշտների հետ:
6. Անմեղությամբ ձեռքերս եմ լվանում,
Զոհասեղանիդ շուրջը դառնում, Տեր,
7. Գովքն եմ Քո բարձրաձայն հռչակում,
Բոլոր սքանչի գործերդ պատմում:
8. Տեր, սիրում եմ այն տունը, ուր դու ես ապրում
Եվ Քո փառքի բնակած տեղը:
9. Մեղավորների հետ մի կործանիր ինձ,
Եվ իմ կյանքը՝ արյունարբու մարդկանց հետ.
10. Նրանց ձեռքերին անօրենություն կա,
Իսկ նրանց աջը լի է կաշառքով:
11. Անարատ եմ ընթանում ես.
Փրկագնիր և ողորմիր:
12. Ոտքս ուղիղ գետնին եմ դրել,
Մեծ հավաքույթում Տիրոջը կօրհնեմ:

ՍԱՂՄՈՍ 26

1. Տերն է իմ Լույսն ու Փրկությունը,
Ես ումի՞ց եմ վախենում:
Տերն է իմ կյանքի ապավենը,
Ես ումի՞ց եմ դողում:
2. Չարերը երբ հարձակվեն վրաս

Մարմինս լափելու համար,
Նեղիչներս ու թշնամիներս, երբ գրոհեն վրաս,
Սահելու են ու վայր ընկնեն:
3. Եթե մի բանակ էլ ինձ պաշարի,
Սիրտն իմ չի վախենա:
Եթե մարտնչեն էլ իմ դեմ,
Դարձյալ վստահ պիտի լինեմ:
4. Մի բան եմ խնդրում Տիրոջից՝
Այս եմ միայն աղաչում, որ որ Տիրոջ տանը բնակվեմ
Կյանքիս բոլոր օրերում.
Տիրոջ վայելչությունը տեսնեմ
Ու Իր տաճարում Իրեն աղերսեմ:
5. Քանի որ չար օրերում Իր Սրահում ապահով պահում է,
Իր խորանում է ինձ ծածկած պահում,
Բարձր ժայռի վրա ամուր հաստատում:
6. Ինձ շրջապատող թշնամիներիս վրա գլուխս
բարձր եմ պահում,
Իր խորանում գոհության պատարագ պիտի մատուցեմ:
Կերգեմ ու կսաղմոսեմ Տիրոջը:
7. Լսիր ձայնս, եբ կանչեմ, ով Տեր,
Ողորմիր ինձ և պատասխանիր:
8. Ասում ես՝
երեսս խնդրեք:
Սիրտս ասում է Քեզ՝
Երեսդ, ով Տեր,
խնդրում եմ, փնտրում եմ:
9. Երեսդ ինձնից մի ծածկիր,
Բարկությամբդ ծառայիդ մի մերժիր:
Դու Օգնականն ես իմ, Տեր,
Ինձ մի անարգիր,
Եվ մի թող ինձ,
Աստված՝ Փրկիչ իմ:
10. Եթե հայրս ու մայրս էլ թողեն ինձ,
Ապա Տերն ինձ կընդունի:
11. Տեր, սովորեցրու ինձ ճանապարհը Քո,

Եվ Քո ուղիղ շավիղներում ինձ առաջնորդի
Կեղեքիչներս պատճառով
12. Նեղիչներիս ձեռքը մի մատնիր ինձ.
Կեղծ վկաներն են ելել իմ դեմ,
Անգութ ստեր են փչում:
13 Հավատում եմ՝ տեսնելու եմ Տիրոջ Բարությունը
Կենդանի եղողների երկրում.
Տիրոջը սպասիր.
Քաջալերվիր ու սրտապնդվիր
Եվ Տիրոջը սպասիր:

ԿՆՈՒՆՔ - - ՄԿՐՏՈՒԹՅՈՒՆ